ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 փետրվարի 2015թ. թիվ 26-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻՆ ՕԲՅԵԿՏԱՅԻՆ
ՎԱՐԺԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. հունվարի 30-ի թիվ 134-Ն որոշմամբ հաստատված «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման կարգի» 5-րդ կետի և ՀՀ Լոռու մարզպետի 2014թ. դեկտեմբերի 24-ի թիվ 477-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2015 թվականի հիմնական միջոցառումների պլանի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. 2015թ. մարտի 2-ից 5-ը ՔՊ միջազգային օրվա կապակցությամբ Հայաստանի Պետական Ագրարային Համալսարանի Վանաձորի մասնաճյուղում, Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջում, Վանաձորի թիվ 18 և Ազարակի միջնակարգ, Վանաձորի թիվ 25 /ներառական/, Վանաձորի թիվ 4, Վանաձորի թիվ 22 և Սպիտակի թիվ 1 հիմնական դպրոցներում անցկացնել օբյեկտային վարժանքներ «Հակառակորդի հարձակման դեպքում տարահանման և փրկարարական միջոցառումների իրականացում» թեմայով, իսկ Վանաձորի պետական համալսարանում, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի Վանաձորի մասնաճյուղում, Վանաձորի թիվ 24, Արջուտի, Մեծ Պարնու և Ստեփանավանի թիվ 6 միջնակարգ և Վանաձորի թիվ 28, թիվ 21 հիմնական դպրոցներում անցկացնել դասախոսություններ «Քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպությունը», «Մարզի ՔՊ համակարգը, խնդիրները» թեմաներով:

2. Վարժանքների և դասախոսությունների անցկացման նպատակներն են.

1) ստուգել մարզի բարձրագույն, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների և հանրակրթական դպրոցների ղեկավար կազմի, աշխատողների և ուսուցանվողների պատրաստականությունը «Հակառակորդի

հարձակման դեպքում» տարահանման և փրկարարական միջոցառումների իրականացման» հմտությունները.

2) ուսուցանել նրանց «Քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպության» գործունեության և «Մարզի ՔՊ համակարգի և խնդիրների» բովանդակությունը:

3. Վարժանքի կազմակերպման և արդյունավետ անցկացման նպատակով վարժանքի ղեկավարներ նշանակել վերը նշված բարձրագույն, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների և հանրակրթական դպրոցների ղեկավարներին:

4. Վերը նշված բարձրագույն, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների և հանրակրթական դպրոցների ղեկավարներին.

Մինչև ս/թ փետրվարի 25-ը՝

1) ճշգրտել քաղաքացիական պաշտպանության պլանները և գործողությունների պլան-ժամանակացույցերը.

2) ճշգրտել տարահանման սխեմաները.

3) օբյեկտային վարժանքի նախապատրաստման փուլում մասնակիցների հետ, ըստ վարժանքի թեմայի, անցկացնել ուսումնական պարապմունքներ:

5. Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետին՝

1) աջակցել Լոռու մարզային փրկարարական վարչությանը վարժանքների մասնակից մարզային ենթակայության հանրակրթական դպրոցներին մեթոդական օգնություն ցուցաբերելու, վարժանքների և դասախոսությունների նախապատրաստման ու անցկացման գործում.

2) մինչև ս/թ փետրվարի 16-ը սույն որոշման մասին իրազեկել վարժանքների և դասախոսությունների մասնակիցներին:

6. Լոռու մարզային փրկարարական վարչության պետին՝

Օբյեկտային վարժանքների նախապատրաստման փուլում մասնակիցների հետ, ըստ վարժանքի թեմայի, անցկացնել ուսումնական պարապմունքներ՝ ներգրավելով տվյալ տարածաշրջանները սպասարկող հրշեջ փրկարարական ջոկատների հրամանատարներին:

7. Վարժանքների և դասախոսությունների անցկացման ընթացքի հսկողությունն իրականացնել Լոռու մարզային փրկարարական վարչության կողմից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2015թ. փետրվարի 6
ք.Վանաձոր